



Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանն այսօր հյուրընկալել էր «Լավագույն մարզական ընտանիք 2019» մրցութի մասնակից և 3-րդ պատվավոր մրցանակային տեղին արժանացած Ասատրյանների ընտանիքին: Համայնքի ղեկավարը շնորհակալագիր հանձնեց ընտանիքին մրցութին լավագույնս ներկայանալու և հաջողություններ արձանագրելու համար: Ընդունելությունն անցավ ջերմ ու մտերմիկ մթնոլորտում: «Ընտանիքում համախմբվածությունը միշտ էլ լավ արդյունքներ է տալիս և դուք դրա ապացույցն եք: Ես շատ ուրախ եմ, որ մեր համայնքում սպորտային ակտիվ ընտանիքներ կան, որոնք մասնակցում են նման մրցույթների: Բոլորս գիտենք, որ Եղյանների ընտանիքը գտնվում է այդ մրցույթի ակունքներում և այսօր կան շարունակողներ ու փոխարինողներ: Հաջողություններ եմ մաղթում ձեզ և շնորհակալություն հայտնում Բյուրեղավանի անունը ևս մեկ անգամ բարձր պահելու համար»-նշեց Հակոբ Բալասյանը : Հիշեցնենք՝ Բյուրեղավան համայնքը ներկայացնող Ասատրյանների ընտանիքը ցուցաբերել է բարձր պատրաստվածություն և հանրապետական փուլին, ավագ տարիքային խմբում նվաճել 3-րդ պատվավոր տեղը: Թիմային մրցելույթի արդյունքում Կոտայքի մարզը գրավել է առաջին տեղը՝ այն կիսելով Երևանի հավաքականի հետ և արժանանալով առաջին տեղի համար սահմանված գավաթին:

17.10.19